ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2014 թվականի թիվ 127- Ա

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի դ/ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի՝ «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի /ծածկագիր՝ 70-2.1-5/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թ.հոկտեմբերի 7-ի N 5 որոշումը և Կարեն Աշոտ Նազարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Կարեն Աշոտի Նազարյանին 2014 թվականի հոկտեմբերի 9-ից երեք ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի /ծածկագիր՝70-2.1-5/ թափուր պաշտոնում:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի (4.70) կիրառմամբ՝ 310858 /երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ/ դրամ:

2. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» թիվ 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ հոդվածի ա/ ենթակետի համաձայն՝ ուժը կորցրած ճանաչել Կ.Նազարյանի հետ 23.07.2014թ. կնքած թիվ 7 ժամկետային աշխատանքային պայմանագիրը և ՀՀ Տավուշի մարզպետի 23.07.2014թ.թիվ 96-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2014թ.հոկտեմբերի 09
ք.Իջևան